

891. 99

LX-55



~~891542-3~~

~~4-53~~

Ե

Ա. Ը. - Ա. Զ.

I.

ԵՐԱԶՄ

ԿԱՏԱՐԻԵՑ

(Պատկեր զիւղական կեանից)

Արտադպւած «Զաւախը» շաբաթաթերթից.

800  
161-ԱՅ

(◎) (◎)

Ա. Խ. Ա. Լ. Ք. Ա. Լ. Ա. Ք.

Արագածոտն Մ. Գրիգորիանի  
1913

891.99

U-55

20 JAN 2006

I

Oct.

20 JAN 2006

# ԵՐԱԳԸ

Oct.

# ԿԱՏԱՐԻԵՑ

(Պատկեր զիւղական կեսնից)



Արտասպանժ «Զաւախը» շաբաթաթերթից.

1001  
293

Ա. Խ. Ա. Լ. Ք. Ա. Լ. Ա. Ք.  
Արագատիպ Մ. Գրիգորեանի.  
1943.

91.62 2014

19.235

ՏԵՍԱՀԱՆՈՒՄ  
ՏԵՍԱՀԱՆՈՒՄ

## ԵՐԱՋԸ ԿԱՏԵՐԻԵՑ

I.

Առաւոտ էր, ամառային գով առաւոտ։ Փայլուն արել նոր զուրս եկած իր մօր զբկից ժպառում էր համեստ կոյսի նման։ Թողունների քաղցր ու մելամաղձոտ երդի ձայները միացած ի մի խնդում էին ու տօնում օրւայ պայծառութիւնը։ Երկինքը կարծես զուգւած-զարդարւած սպասում էր իր հիւրին—արեին, որ գայ ու անցնի իր վրայով։ Չորս-դին լուս էր, միայն հեռակից լուսում էր մի քաղցր, աանջւոյի մելամաղձոտ երդի ձայն, որը կարծես մոռացած ամեն ինչ՝ ողբում ու գովաւմ էր իր ոէրը...

Մի սարի սարոստում, մի ապառաժոտ ժայռի կրծքին շինւած էր գիւղի աղբիւրը, որտեղից ամեն օր ջուր էին տանում գիւղի ջահէլ աղջրկները՝ սափորները ուսերին տուած։

Գարեգինը զեռ վաղ, շատ վաղ, անհանգստացած իր տեսած երազով, շտապել էր աղբիւրի մօտ՝ տեսնելու իր կուսիին, պատճելու նրան իր տեսած երազը։

Լուսին ու շանում էր. Գարեգինը անհանգիստ տանջւում և ձեռքը տւած զլիսին՝ հենւած մի ապառաժ քարի, ախ ու վախ անելով երգում էր ու կարծես իմաց անում իր կուսիին, որ անհամբեր ու ասում է նրան։

Գալիս էին շատ պղջրկներ սափորները ուսերին, մօտենում աղբիւրին ու ջուր լցնելով յետ վերադառնում։ Խակ Գարեգինը ու շագրութեամբ նայում էր գալող-գնացողներին, սակայն չգըտնելով իր սպասածին, աչքերը փակում ու շարունակում իր ոէրերգը։

Ամենքը արդէն հեռացել էին, ոչ ոք չկար աղբիւրի մօտ. մէն-մէնակ մնացած Գարեգինի

սիրաբ՝ ճմլում էր, նա չէր կարողանում ինքն իրան հաշիւ տալ, թէ ինչու ուշացաւ նա: Այս պահում մէկ էլ հեռւից երևաց մէկը, սափորները ուսերին տուծ աշ ու ձախ տատանելով, որը շատապում էր գէպի աղբեւը: Գարեգինը տեսնելով այդ՝ աչքերը սրեց, հայեացքը ուզդեց դէպի նա և կարծես մոռացաւ իր վիշտն էլ, երազն էլ: Նա վեր ցատկեց տեղից և անհամբեր սրտով սկսեց ձեռքով նշան անել: Լուսին տեսնելով Գարեգինին՝ աւելի արագացրեց քայլերը. և երբ հանգիպեցին՝ փարւեցին միմեանց ու սկսեցին համբուրւել անյագ:

— Ինչու ուշացար սիրելիս, ես այսօր աւելի վաղ եկայ քեզ տեսնելու, սլատմելու իմ այն երազը, որը քնիլու անգամ չլ թողեց.—

— Թէ, պատմիր շուտ. ինչ երազ.

— Ծ հոգիս, շատ վատ երազ, չար երազ:

— Մի տանջիր ինձ, շուտ.

— Ահա թէ ինչ, — հոգոցով սկսեց Գարեգինը. — Ճմեռ էր, խիստ ձիւն էր եկել. ես գնուցել էի քաղաք տանը համար կարեոր բաներ գնելու և երբ վերադառնում էի տուն՝ ճանապարհը կորցրինք, մենք Յ-Կ հոգի էինք, և յայսերս գրած նախախնամութեան վրայ՝ շարունակում էինք մեր ճանապարհը: Վրա հասաւ գիշերը, ձիւնը սկսեց գալ աւելի սաստիկ կերպով և թափել ուղղակի: մեր աչքերի մէջ այնպէս, որ մենք բոլորովին կորցրինք մեզ:

— Սաստած իմ, ինչ վատ է,

— Յանկարծ մեզ վրայ յարձակւեցին մի երեք հատ գայլեր, օ, այն ել սպիտակ գայլեր:

Մենք սկսեցինք փախչել, խսկ թէ ուր, ինքներս էլ չգիտէինք: Մեր առաջ բացւեց մի մեծ և խոր վիճ, որի մէջ վիստում էին ամեն տեսակ օձեր ու կենդանիներ. նրանք մեզ նկատելով սկսեցին որոտալ, խզալ ու ճպճպացնել: Մենք խելքերս կորցրինք. մեզանից մէկը զլորւեց ներժե և անմիջապէս...

— Դու ինչ արի՞ հոգիս. — կտրեց նրան կուսին, սարսափաց ձայնով:

— Ես, չեմ յիշում, ուշաթափւեցի և ապայ ուշքի գալով տեսայ, որ մենք մի բարձր սարի վրայ չոքած ազօթք էինք անում: Այլ ևս չեմ յիշում, դարձնեցի:

— Սաստած իմ, ինչ վատ երազ է, ի բարին կատարել:

— Այն, վատ երազ: Լսիր լուսի, ես կարծում եմ, որ այդ երազով բացատրում է այն, որ հայրդ չպիտի համաձայնեւի...:

— Այս հայրս, — հոգոցով առաջ լուսին, — հէսց երիկ նա մօրս հետ ծածուկ խօսում էր, ես ականջ դրի. նա առում էր թէ խօմ չեմ կարող շատը թողած՝ քիչը վերցնել. այ օրինակ, Ատայոյենց Դեկնը 100 մանեթ է տալիս...

— Ես այդ շանը հոգին կ'հանեմ, թող նա հեռու քաշւի: Ոչ լուսի, թոյլ չեմ տայ ես, որ մի հարուստ խի իմ ձեռքից իմ սիրուհուն, ոչ, թէ ես փողով աղքատ եմ, բայց նամուսով շատ հարուստ. ես թոյլ չեմ տայ:

— Ի՞նչ միջոց կարող ես ձեռք տոնել:

— Այն, որ նրան շան սատակ անել կտամ.

— Հանգիստ հոգիս, եթէ նրանք լսեն այդ բանը, երկուսին էլ այսուեղ կսպանեն:

— Դու անհոգ կաց, ես բոլորը կկարգադրեմ, միայն դու խօսքիդ պինդ եղիր. խսկ առայժմ դու գեռ գնա, կարող ես ուշանալ...

Եւ գարեգինը լցնելով լուսիի սափորները, տւեց վերջին հրաժեշտը՝ անկեղծ համբոյրի գըրզմամբ ու ճանապարհուեց զէ զի տուն:

## II.

— Ես այլ ես չեմ կարող սպասել, այդ մարդկար իմ զլուխը տարել են. ես այսօր պէտք է վերջացնեմ:

— Ի՞նչ ես խօսում այ մարդ. խոմ ձի չես ծախում. ախր ես էլ մայր եմ, ես էլ գութ ունիմ, ինձ էլ հարցրու մէկ.

— Ի՞նչ պիտի հարցնեմ, դու գնա ապուրդ եփիր: Սյալես էին խօսում լուսիի ծնողները: Համա-

գիւղացի Մատոյենց Ղեկնը ուղարկած լինելով  
իր պատզամնների, սպասում էր պատասխանի,  
նա ուզում էր կուսիին առնել իր որդու՝ Զաքա-  
րի համար, նա իրրե հարուստ և զիւղում առա-  
ջինը՝ առաջարկել էր զիւսագին 100 բուր:

Կուսիի մայրը հակառակ էր այդ բանին, նա ու-  
զում էր, որ կուսիին ամուսնացնէին Վառէենց  
Գարեգինի հետ, որը և սիրում էր կուսիին: Այդ  
զիտեր նրա մայրը:—

Իսկ հայրը ուզում էր անպատճառ բարեկա-  
մանալ Մատոյենց Ղեկնի հետ և աղջկանը  
միջոցաւ էլ ցանկանում էր ստեղծել այդ, քանի  
որ նա էլ ուղարկել էր պատզամն, ուրեմն մերժե-  
լու էլ տեղիք չկար:

—Այ մարդ, չէ որ մի քիչ էլ աղջկայ սրտով  
պիտի լինի:

—Այ կնիկ, —բերանը ծոմուելով պատասխանեց  
մարդը, —ախը գուն էլ չես իմանում, որ իմ էլ  
սրտովը պիտի լինի:

—Քա ի՞նչ ես ասում, անասունս Վառէենց Գա-  
րեգինին է ուզում. դէ, նրանք էլ պատզամն են  
ուղարկել և համաձայնեւել նոյնիկ 100 մանէթ  
տալու: Այստեղ գու ոչինչ չես կորցնում. գու քո  
100-ին խառնւիր, իսկ աղջիկդ որին ուզում է թող  
առնէ:

—Վառէենք ինձ ի՞նչ օգուտ կարող են տալ.  
իսկ Մատոյենք, օ, հազար ու մի:

—Չէ մարդ, գու լա ես արել լու չես ուզում  
անել. մի չորս կողմդ տես, բոլորի աղջկներն էլ  
իրանց ուզած տղի հետ են պատկւում. գու մեզ  
պիտի խայտառակես:

—Օ՛ֆ, շատ երկար չեն խօսի, ես իմ բանը  
գիտեմ, քեզ ասի գնա ապուրդ եփիր:

Այսպէս, կուսիի հայրը ոչ մի արամազրութիւն  
չունիր Գարեգինին աղջիկ տալու. իսկ կուսին միշտ  
աղաչում էր մօրը, պաղատում, որ ինքը բացի  
Գարեգինից ուրիշ ոչ ոքի չի ուզում առնել:—

## III.

Զմեռային ամպամած մի մռայլ երեկո էր.  
բուքն ու բորան չորս-դին սփռած իրենց ճանկերը՝  
սանամանիք էին զարձրել ամեն մի խուլ անկիւն:

Ղեկնենց ներսի գոմում հաւաքւած մի խումբ  
ջանիներ, նրա որդու՝ Զաքարի ղեկավարու-  
թեամբ՝ խօսում, վիճում էին, թէ ի՞նչ միջոցի  
դիմեն, որ մէջ տեղից վերացնեն Վառէենց Գարե-  
գինին:

Այս ժողովի մասին տեղեկութիւն չունէին Զա-  
քարի ծնողները: Մէկը ասում էր սպասնալիք-  
ներ տանք, որ յետ կենայ կուսիից, մի ուրիշը  
շեշտում էր, որ անպայման պէտք է սպանել...  
և այսպէս, երկար վիճաբանութիւնից յետոյ բո-  
լորը համաձայնեցին, որ սպանելը ամէնակըտ-  
րուկ միջոցն է: Այժմ մնում էր մտածել՝ ի՞նչ  
կերպ սպանել:

—Ցղերք, —յանկարծ ուրախ դէմքով գոռաց  
մէկը, —նա այսօր քաղաք էր գնացել և հաւանա-  
կանէ, որ գեռ չի էլ վերադարձել, արիք գնանք  
ճանապարհին՝ կամուրջի տակը պահւինք ու երբ  
գայ՝ յարձակւինք ու սպանենք:

—Դու ի՞նչ գիտես, —առարկեց մի ուրիշ երի-  
տասարդ, —կարելի է եկել է:

—Ո՛չ, գալած չի լինի:

—Կարելի է իմանալ, —մէջ մուաւ մի ուրիշը,  
—մէկին ուղարկենք:

—Կարօ ջան, —ձայն տւին չորս կողմից, և  
կարօն հպատակւելով ընկերների առաջարկին,  
շտապեց ստուգելու: Զանցած մի քանի բովի նա  
վերադարձաւ ու գեռ դռնից բղաւեց, —դէ, շտա-  
պենք, քանի ուշ չէ:—

—Ո՞րտեղից իմացար, —հետաքրքրւեց մէկը:

—Ծօ զրա ժամանակը չէ, շտապենք, —վրայ  
բերեց մի ուրիշը ու առաջ վագեց: Ամենքն էլ  
գուրս հանելով իրենց զէնքերը՝ որը ատլաճանակ,  
որը գաշոյն, որը մեծ դանակ և միասին գուրս  
գալով՝ ուղևորւեցին դէպի ճանապարհի կա-  
մուրջը:

Եղանակը պարզ էր. երկինքը բացւել էր ու զարդարւած բիւրտուոր աստղերով՝ նազիկ այսերի Նման ժպտում էր; Լուսինը պարզ գէմքով բացած իր աշքերը, կարծես վճռել էր լուս ու մունջ վկայ լինել կատարւելիք ոճիրին:

Կարծես բնութիւնն էլ նպաստում էր մեր  
ջահել դոչաղներին. — մի երկու ժամ՝ առաջ մուայլ-  
ւած երկինքը փսխեց իր գիրքը:

Ահա և կամուրջը. երիտասարդներից մի քանիսը մտան աջ կողմը, մի քանիսը՝ ձախ, իսկ մի երկուսն էլ քիչ հեռանալով՝ զարդն մտան ու պահապան կանգնեցին:

Գիշերը՝ Եղան ժամը 10-ը, մեր ջահելմերը անց դադար պատճում էին իրենց սրբին:

— Տղերք, հեռւից մէկը երիումէ. — Ճայն տըւ-  
ւեց գաբան մտածներից մէկը:

Խեղճ Գարեգինը կարծես զգում էր գալիք վասնդը, կարծես նրա հոգին վկայում էր այդ նա գալիս էր շատ գանդաղ ու վախկոն քայլերով և տիսուր երգում.—

«Այս սերունդիս, եթէ մեռնեմ վաղաժամ,

**ԶԵ** կարծենաս, որ քո սիրուց բեղարած»...

Հազիւ 10—15 քայլ էր մնացել, որ խեղճը  
ոտք գներ կամուրջին, երբ լսւեց մի սուր շւար,  
որի ձայնի հետ զուրս պրծան արիւնածարաւ ե-  
րախտառարդներն ու զրջապառեցին նըան:

Աման. — լուեց Գարեգինի ձայնը, որը և ընդ  
միշտ կորաւ սրերի հարւածների ու ատրճանակ-  
ների ձայնների մէջ։ Կիսամեռ զետին զլորւեց  
անմեղ զոհը ու խորը ախ քաշելով հանգաւ հա-  
ւայտեան

Մարդասպանները, իրանք ևս սոսկալով իրենց  
արածից, անմիջապէս փախան ամենքը մի կողմ.  
իսկ Զաքարը, աւելի տպաւած իր արաքքով, մո-  
ռայաւ ընկերներին և մէնակ մնալով հանդի մէջ  
դիակի մօտ, ցնցւեց ամբողջ Առաքու. Նա ուզեց  
խօսել, բայց եզու չկար փախից պատճառձենի իր...  
**ԴՐԱ**

Իսկ լուսինը տեսնում էր այս բալորը ու յուսմ...

Ալիալքալաք, 1910 թ.

И. ОМЕНГА, Мясн. 77-й  
БИЗУЕВЪ БЫЛЪ ИСКУЩЕНЪ



19.235